



Պիկ Ռիեյթի

«Պիկ» ընկերությունների խումբը հիմնադրվել է ԱՄՆ-ում գրանցված Գաֆեյսճեան Ընտանիք Հիմնադրամի կողմից՝ Հայաստանում անշարժ գույքին առնչվող հաճախորդի հատկանշական կարիքները մեկ վայրում բավարարելու առաքելությամբ:

Մենք աշակցում ենք մեր հաճախորդներին անշարժ գույքի հետ կապված բոլոր գործարքներում՝ սկսած անշարժ գույքի ձեռքբերումից մինչև դրա վերանորոգումը, ինչպես նաև կառավարումը և տարածքների վարձակալումը:

Էլիտար անշարժ գույքի համաշխարհային միտումները 2008թ-ի երկրորդ կիսամյակում



Վաճառվում է յուրահատուկ առանձնատուն Կասկադի մոտակայքում 800 քմ բնակելի մակերեսով, փակ լողավազանով և շոգեբաղնիքով, ինչպես նաև գինու մառանով:

2008թ-ը սկսվեց համաշխարհային ֆինանսական շուկաների ճգնաժամով: Այս ճգնաժամը յուրահատուկ էր նրանով, որ այն սկսվեց հենց ԱՄՆ-ում անշարժ գույքի շուկայի անկումից:

Ճգնաժամը անրադարձավ ի վերջո նաև թանկ բնակարանների սեգմենտի վրա: Մակայն պետք է նշել, որ Էլիտար բնակարանների գնային աճը՝ համեմատ մնացած անշարժ գույքի սեգմենտների, շատ ավելի դրական միտումներ ցուցաբերեց:

Այս տարի ամենաթանկ բնակարանները գտնվում են արդեն Մոնակայում, որտեղ մեկ քառակուսին թանկարժեք բնակարանների սեգմենտում հասել է € 51,000, որը տարվա սկզբից աճել է 30%: Իսկ Լոնդոնը այս տարի զբաղեցրեց երկրորդ տեղը, որտեղ Էլիտար բնակարանների գինը երկրորդ եռամսյակում կազմեց €44,620, աճելով միայն 1.8 %:

Մոսկվան դեռ զիջում է Լյու Յորքին: Լյու-Յորքի Մանհեյտենի բնակարանների գինը աճել է 12.3%-ով կազմելով միջինը €33,705 մեկ քառակուսի մետրի համար:

Երևանում Էլիտար բնակարանների միջին վաճառքի գինը երկրորդ կիսամսյակում կազմել է միջինը € 3000:

Անշարժ գույքի շուկան 2008թ. օգոստոսին Երևանում

2008թ-ի օգոստոսին առաջին անգամ վերջին տարիների տարիների նկատվեց գների անկում նախորդ ամսվա նկատմամբ: Միջին գինը մեկ քմ բնակելի տարածքների համար

օգոստոս ամսին կազմեց 300,800 դրամ, որը 1.8% ցածր էր 2008-ի հուլիսի ցուցանիշից: Օգոստոս ամսվա համեմատ ամենաշատ նվազումը տեղի է ունեցել Արաբկիր համայնքում 2.4%-ով, իսկ

մինիմալ նվազումը տեղի է ունեցել Շենգավիթ համայնքում: Մակայն հարկ է նշել, որ սույն բնակելի տարածքների գները 2007թ. օգոստոսի նկատմամբ աճել են 11.4%-ով:

Համայնքներ	Օգոստոս 2007թ	Օգոստոս 2008թ	Հուլիս 2008թ
Կենտրոն	454 800	483 600	494 800
Արաբկիր	376 600	412 300	422 300
Զեյթուն	282 200	308 400	311 000
Նոր-Նորք	234 300	278 100	284 500
Շենգավիթ	251 100	284 500	286 000
Դավթաշեն	259 400	297 700	300 500
Աջափնյակ	247 300	278 000	282 500
Մալաթիա	231 200	265 400	271 600

Ուսումնասիրելով բնակարանների գները 2007թ-ի օգոստոսին, 2008թ-ի հուլիսին և 2008թ-ի օգոստոսին, զալիս ենք այն եզրահանգման, որ 2008թ-ի օգոստոսին 2007թ-ի օգոստոսի համեմատ բնակարանների գների աճման տոկոսը իր մինիմալ արժեքին է հասել Կենտրոն համայնքում՝ 6%, իսկ մաքսիմալ արժեքին է հասել Նուբարաշենում՝ 17.9%:

Պիկ Ռիեյթի ՓԲԸ

ք.Երևան 0015, Խորենացի 11,11

Հեռ. : (+374 10) 51 90 85

E-mail: info@peak.am

URL : http://www.peak.am